ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ԱՆԻ-ԵՐԵՐՈՒՅՔ ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Տասնամյակների ընթացքում հայ ժողովուրդը մշտապես հառելով իր հայացքը դեպի Արարատ լեռն ու սահմանից այն կողմ գտնվող հայրենի հողերը, բաղձալի մի հույս է փայփայում, թե մի օր, անցնելով Արաքսն ու Ախուրյանը, ծունկի է իջնելու և փարվելու սեփական հողին:

Սահմանից այն կողմ գտնվող ազգային պատմամշակութային ժառանգության պահպանության մասին շատ է խոսվել: Սակայն այսօր էլ այդ նույն առիթով մենք բոլորս լրջորեն անհանգստանում ու տագնապում ենք, որովհետև բացառված չէ, որ վաղը կարող ենք չտեսնել այն, ինչ այսօր կա ու թանկ է բոլորիս համար: Հաշտվել այն մտքի հետ, որ հարևան երկրի տիրապետության տակ գտնվող մեր սեփական հողում այսօր չեն ապրում հայերը, չեն ապրելու վաղը, ոչ էլ մյուս օրը, գուցե և ընդհանրապես, որ նույն բախտին պետք է արժանանան նաև նրանց ստեղծած պատմամշակութային կոթողները, մենք չենք կարող:

Սահմանից անդին գտնվող մեր պատմամշակութային արժեքների պահպանման, դրանց ոչնչացման դեմն առնելու մեր ամենամեծ մտահոգություններից մեկը հայոց պատմական մայրաքաղաք Անիի հնագիտական հուշարձանների խնդիրն է:

Անիի հնագիտական հուշարձանների նկատմամբ ժամանակակից հետաքրքրության աճի ակունքները հարկ է փնտրել 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարի առաջին կեսը, այսպես կոչված՝ Եվրոպական լուսավորության դարաշրջանում: Այս դարաշրջանի գիտնականների ուշադրությունը սկզբում էր մեծ մասամբ դեռևս չբացահայտված, և, թերևս, նաև փոքր-ինչ խորհրդավոր Արևելքին՝ Հունաստանից ու Եգիպտոսից մինչև Հնդկաստան ու Չինաստան, ընդգրկելով Մերձավոր ու Միջին Արևելքը, որի մի մասն էր Հայաստանը:

ՀՈԴՎԱԾ-ՆԵՐ

Ընդհանուր առմամբ հիմնականում ճանապարհորդների տպագիր հաշվետվությունների շնորհիվ, որոնք հաճախ ուղեկցվում էին գծանկարներով ու գունագեղ փորագրանկարներով, Եվրոպան և Ամերիկան ծանոթացան Մերձավոր Արևելքի միջնադարի ահռելի ժառանգությանը: Ուշադրությունից դուրս չմնացին նաև Անիի հնագիտական հուշարձանները: Անիի նկատմամբ հետաքրքրության երկրորդ վերելքն

առնչվում է արդեն նրա հնագիտական սիստեմատիկ ուսումնասիրություններին, որոնք իրականացնում էր Ռուսական կայսրության գիտությունների ակադեմիան: Հնագիտական պեղումները սկսվեցին 1892 թվականին, որոշ ընդհատումներից հետո վերսկսվեցին 1904 թվականից ու շարունակվեցին մինչև 1917 թվականը՝ Նիկողայոս Մառի գլխավորությամբ:

Անիի նկատմամբ հետաքրքրության երրորդ վերելքն առնչվում է Թուրքիայի գործարար շրջանների կողմից վերջին երկու տասնամյակում զբոսաշրջիկության զարգացման հետ, երբ յուրաքանչյուր տարի Կարսի նահանգ է այցելում միջին հաշվով 50-60 հազար զբոսաշրջիկ: Իրոք՝ վերջին տարիներին որոշ թուրք գիտնականներ հետաքրքրություն են ցուցաբերում Անիի հուշարձանների հանդեպ: Հրապարակի վրա են Անիի վերաբերյալ առանձին ուսումնասիրությունների արդյունքները: Վերսկսվել են հնագիտական պեղումները, նույնիսկ ձեռնարկվել են Անիի առանձին հուշարձանների վերականգնման աշխատանքները: Այս աշխատանքների գոյությունը սակայն ամբողջական համարել չի կարելի, և, փաստորեն, հնագիտական այս ողջ տարածքի նկատմամբ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելը դառնում է խիստ անհրաժեշտություն և այժմեական: Եվ այսօր հարկավոր է կրկին ու կրկին ահազանգել Անիի պատմամշակութային անգերագնահատելի ժառանգությունը կորստից փրկելու մասին, այդ ժառանգությունը խեղաթյուրումներից զերծ պահելու, մարդկային ստեղծագործ մտքի այդ անգերագնահատելի արգասիքը հաջորդ սերնդներին անխաթար հասցնելու մտահոգությամբ: Այդ պարագայում հարկավոր են մի շարք անհապաղ քայլեր, որոնցից կարևորագույններից մեկը, մեր կարծիքով, Անին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում ընդգրկելն է:

Դեռևս 1970 թվականին այս հարցն առաջին անգամ բարձրացրեց հայ ճարտարապետության լավագույն գիտակներից մեկը՝ Պաոլո Կունեոն: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հրատարակվող «Մոնումենտում» պարբերականում հրատարակված «Անի քաղաքի ավերակները: Արևելքում միջնադարյան հայկական մայրաքաղաք: Պահպանության և արժեքավորման հրատապ մի խնդիր» խորագիրը կրող հոդվածում[1] Պաոլո Կունեոն ի պատասխան իր իսկ. «ի՞նչ պետք է անել, որպեսզի նման անգնահատելի հարստությունը՝ Անիի պատմական վայրը պահպանվի և արժեքավորվի համաշխարհային մշակույթի ընդհանուր շրջանակում» հարցադրմանն առաջարկում է տարբեր երկրների և Թուրքիայի մասնագետների համատեղ ջանքերով ձեռնարկել Անիի հնագիտական տարածքի ամբողջական չափագրությանը, հուշարձանների ցուցակագրմանը և հաշվառմանը, շարունակել պեղումները և հուշարձանների վերականգնումը:

Խիստ ուշադրության արժանի այս նույն հոդվածում Պաոլո Կունեոն, մասնավորապես, գրում է. «Գիտականորեն այսպիսի կարևոր նախաձեռնությունը մշակույթի համար համաշխարհային արձագանք կունենա՝ միաժամանակ տնտեսական հետաքրքիր հետևանքներ, կզարգանա մասնագիտական տուրիզմը... կստեղծվեն նոր կապեր, կկազմակերպվեն գիտահետազոտական արշավախմբեր, իսկ տեղացի աշխատավորների՝ պեղումների և քարտաշների համար կբացվեն աշխատանքի նոր հնարավորություններ: Մինչդեռ Անին, որ անժխտելիորեն մեծ արժեք ունի, մնում է գրեթե անծանոթ, այցելուներից մեկուսացված և եթե որոշում չկայացվի ավերման ընթացքը կասեցնելու մասին, նրան վիճակված է կորչել մոռա-

ցության մեջ»:[2]

Պաոլո Կունեոն ողջ հոգով նվիրվել էր Անիի հուշարձանների պահպանման խնդրին, դարձել նրա լավագույն քարոզիչը: Նրա գրչին են պատկանում Անիին նվիրված բազմաթիվ հոդվածներ և մենագրություն:[3] Ու երբ թերթում ես նրա աշխատանքները, զարմանում ես թե իրոք Անին ինչպիսի խոր հետք է թողել նրա մեջ: Մի կողմ թողնելով մասնագիտական դիտողությունները, նա երբեմն թույլ է տալիս զեղումներ, բանաստեղծական, հուզական դրսևորումներ, որոնք մենք կարող էինք տեսնել միջնադարյան հեղինակների, Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Թումանյանի, Լեոյի, Ավետիք Իսահակյանի և Անիով զմայլված շատ-շատերի մոտ:

Եվ այդ բոլոր գործերում երևակվում է նրա՝ Անիի պատմաճարտարապետական անգնահատելի արժեքը գիտակցող արվեստաբանի, գիտնականի, Անիին նվիրված՝ երբեմն նույնիսկ գիտական ոճին «անհարիր» հուզական որակումները: Ահա օրինակ. «Վիթխարի մի քարափի վրա... իրենց բանաստեղծական մենության մեջ կանգնած են Անիի բեկորները: Խորհրդավոր լռություն է, սառը քամիները փչում են դատարկ կամարների միջով և թափահարում քարակերտ առյուծի բաշը, որը դարեր շարունակ միայնակ կանգնած է այնտեղ, որպես պահակ՝ վաղեմի Հայաստանի անցած փառքն արտահայտող բեկորների վրա»:[4]

Անցած 180 տարիների ընթացքում Անին տեսել ու նկարագրել են բազմաթիվ հայեր ու օտարազգիներ՝ ճանապարհորդներ, ճարտարապետներ, հնագետներ, պատմաբաններ, բանաստեղծներ, գեղանկարիչներ և լուսանկարիչներ: Եվ նրանցից յուրաքանչյուրն ուրույն ձևով է բնութագրել իր տեսածն ու զգացածը: «Անին կարելի է նկարագրել անթիվ անգամ, ինչպես նկարագրում են արշալույսը, լուսինը, ծովը, գետյունը, որովհետև նա էլ այդպիսի մի երևույթ է մեր մարդկային աշխարհում», - դեռ 1905 թվականին գրել է Լեոն:[5]

Եվ ահա՝ 1989 թվականի հոկտեմբերին Նյու-Յորքում, գերաշնորհ տեր, արքեպիսկոպոս Մեսրոպ Աշչյանի անձնական նախաձեռնությամբ հրավիրվեց միջազգային գիտաժողով նվիրված Անի մայրաքաղաքի հազարամյակին: Առանձնակի կարևոր էր այդ գիտաժողովում Պաոլո Կունեոյի զեկույցը, ուր նա հանդես եկավ Անին միջազգային արգելավայր ստեղծելու մասին առաջարկով: Նա գտնում էր, որ Անիի պահպանությունը պահանջում է երկու հարևան երկրների համագործակցությունը և փոխադարձ համաձայնությունն Ախուրյան գետի աջ և ձախ ափերին գտնվող պատմաճարտարապետական հուշարձանների և հնագիտական վայրերի համատեղ օգտագործման մասին: Պ. Կունեոն առաջարկում էր հիմնել Միջազգային հնագիտական արգելոց, որը կընդգրկի թե՛ Անիի, թե՛ Երերույքի տարածքները: Արգելոցի կազմակերպման նախագիծը, որը մշակել էր Կունեոն Հայկական ճարտարապետական հետազոտությունների Հռոմի կենտրոնում, բաղկացած էր երկու տարբերակից: Այդ նախագիծ-քարտեզներից առաջինը (1-200000 հարաբերությամբ) ներկայացնում էր ավելի խոշոր աշխարհագրական միջավայր, առանց միջազգային քաղաքական սահմանների, Կարս-Գյումրի-Թալին առանցքով: Նախագիծ-քարտեզներից երկրորդը (1-25000 հարաբերությամբ) հիմնականում պարունակում էր.

1. Տարածաշրջանը՝ բաժանված սահմանափակման երկու գոտու, մեկը՝ «պաշտպանված շրջանի», մյուսն ավելի շեշտված՝ «սահմանափակ շրջանի»:

2. Պատմական հուշարձանների գոտիները, որոնք Անիից բացի, ընդգրկում են Մաղազբերդի ամրոցը, Բագնայր կուսանոցը, Հոռոմոսի կուսանոցը, Թայլարի եկեղեցին՝ Ախուրյան (Արփաչայ) գետի արևմտյան կամ թուրքական ափին, Երերույքի բազիլիկ տաճարը և Հայկաձորի եկեղեցին՝ արևելյան կամ հայկական կողմում:

3. Արգելոցի երկու հիմնական մուտքերի տարածքը, մեկը՝ Երերույքի մերձակայությամբ, մյուսը՝ հենց Անիի պարիսպներից դուրս, որտեղ տեղադրվելու էին հնագիտական հետազոտությունների միջազգային կենտրոնները:

4. Արահետների օգտագործման հնարավորությունը սահմանի երկու կողմերում, ոչ միայն հետիոտն, այլև ձիավոր այցելուների համար:

5. Այցելուների համար շարժման ճանապարհների ուղղությունները:

Խիստ ուշագրավ այս նախագծային առաջարկությունն իր մահից առաջ Պ. Կունեոն հայկական ճարտարապետական հետազոտությունների Հռոմի կենտրոնի անունից ուղարկեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա, որտեղ այն երկար ժամանակ անուշադրության մատնվեց:

1990թ. հոկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Մինիստրների խորհուրդը, քննարկելով Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում կայացած հայ ճարտարապետական և մշակութային ժառանգության պահպանությանը նվիրված միջազգային գիտաժողովի հարցադրումների մասին հարցը և կարևորելով հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական հուշարձանների պահպանման գործը, իր թիվ 480 որոշմամբ կազմակերպեց Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնը:

Հանրապետության կառավարությունն իր որոշմամբ հանձնարարեց հուշարձանների պահպանության պետական մարմնին՝ Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիի և Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հուշարձանների վիճակը պարզելու և հետագայում դրանց պահպանությունն ապահովելու համար սեղմ ժամկետում ուսումնասիրել և կառավարություն առաջարկություն ներկայացնել խորհրդա-թուրքական գիտական, մշակութային և տնտեսական համագործակցության գոյություն ունեցող երկկողմանի պայմանագրերի շրջանակներում խորհրդա-թուրքական համատեղ գիտական արշավախմբեր ստեղծելու և հայ մասնագետներին դրանց մեջ ընդգրկելու հնարավորության մասին:

Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի ստեղծումից հետո, մեր խնդրանքով և, հատկապես, Պաոլո Կունեոյի համաձայնությամբ (որն, ի դեպ, հանդիսանում էր վերոհիշյալ կենտրոնի փոխնախագահը) նախագծերը հանձնվեցին կենտրոնին:

1993թ. «Անի» պարբերականում հրապարակվեց Պ. Կունեոյի նյությորքյան զեկուցումը:

1992թ. օգոստոսին ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով, ապա, երկու ամիս անց, փոստային կապով Թուրքիայի Հանրապետության պրեզիդենտ Է. Օզալին և Թուրքիայի Հանրապետության վարչապետ Ս. Դեմիրելին Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի կողմից հղվեցին երկու գրություն, ուր, մասնավորապես, Թուրքիայի Հանրապետության ղեկավարության ուշադրությանն էին ներկայացվում 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով

Անիի տարածքում գտնվող հուշարձանների, հատկապես՝ Անիի Մայր տաճարին հասցված վնասների վերացման հարցերը:

Ստորև ներկայացնում ենք Թուրքիայի ղեկավարությանը հասցեագրված այդ ընդարձակ գրությունից մի հատված.

«Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնը դիմում է Ձեզ ներքոհիշյալ առաջարկություններով և խնդրում դրանք քննարկել և ընթացք տալ:

1. Նախնական տվյալների համաձայն 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից մեծապես տուժել է հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Անիի Մայր տաճարը, որը կառուցվել է 1001 թվականին: Փլուզվել է տաճարի հյուսիս-արևմտյան անկյունը, որի հետևանքով խարխլվել է ամբողջ կառույցը և եթե անհրաժեշտ վերանորոգման և ամրացման աշխատանքներ չձեռնարկվեն, ապա մոտ ապագայում ավերակի կույտի կվերածվի դեռևս կանգուն եկեղեցին:

Ուստի առաջարկվում է Ձեր թույլտվությունը և համաձայնությունը՝ ձեռնարկելու տաճարի վերականգնման և ամրացման աշխատանքները, որոնց իրականացումը հնարավոր է կատարել հայ շինարար վարպետների և ճարտարապետների ուժերով, Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի ֆինանսական միջոցների հաշվին: Այդ աշխատանքներին նախատեսվում է մասնակից դարձնել նաև Թուրքիայի, Իտալիայի, ԳՖՀ-ի և Բուլղարիայի մասնագետներին:

Եթե համաձայնությունը ձեռք բերվի, ապա մասնագետներից բաղկացած խումբը 1992 թվականի հունիս-հուլիս ամիսներին կարող է սկսել տաճարի ուսումնասիրման և վերականգնման աշխատանքների փաստաթղթերի կազմման գործը և զուգահեռաբար տասը մարդուց բաղկացած քարտաշ վարպետների խմբով ձեռնարկել տաճարի տարածքի մաքրման և հիմքերի ամրացման աշխատանքները:

2. Նկատի ունենալով, որ Անի քաղաքում վերջին տարիներին պարբերաբար կատարվում են հնագիտական պեղումներ թուրք գիտնականների և այլ երկրների մասնագետների կողմից, առաջարկվում է ընդհանրապես ստեղծել միջազգային հնագիտական արշավախումբ և նրա աշխատանքներին մասնակից դարձնել նաև հայ գիտնականներին:

Այս նպատակի համար Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնը պատրաստ է իր վրա վերցնել պեղումներին մասնակցող հինգ հնագետների, երկու ճարտարապետների և մեկ լուսանկարչի, ինչպես նաև համաձայնության դեպքում Հայաստանի կողմից պեղման աշխատանքները կատարող քսան հոգուց բաղկացած հայ բանվորների խմբի պահպանման բոլոր ծախսերը և վարձատրությունը:

Հարցի դրական լուծման դեպքում մեր ուժերով և ֆինանսական միջոցներով Անիում հնագիտական արշավախմբի համար կկառուցվի անհրաժեշտ բազա՝ իր բոլոր հարմարություններով (հյուրանոց, քանգարան, գրասենյակ, պահեստներ, ճաշարան, ֆոտոլաբորատորիա, հայտնաբերված իրերի վերականգնման լաբորատորիա):

3. Անի քաղաքի տարածքում պահպանված ճարտարապետական հուշարձանները հետագա կորստից փրկելու նպատակով առաջարկում ենք ստեղծել Անիի հուշարձանների կոնսերվացման և վերականգնման միջազգային հանձնաժողով, որի կազմում կընդգրկվեն Թուրքիայի, Հայաս-

տանի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԳՖՀ-ի, Բուլղարիայի և Լեհաստանի մասնագետները:

Փոխադարձ համաձայնության և պայմանավորվածության դեպքում 1992 թվականի օգոստոս ամսին կարելի է Անիում կազմակերպել հուշարձանների վերականգնմանը մասնակցող երկրների ներկայացուցիչների հանդիպում, տեղում ուսումնասիրել և հաշվառման վերցնել հուշարձանները և կազմել համատեղ աշխատանքների տասնամյա ծրագիր:

Անիի տարածքում գտնվող հուշարձանների վերականգնման, ամրացման և կոնսերվացման բոլոր տեսակի աշխատանքների ֆինանսավորումը, բանվորական ուժի և շինանյութի ապահովումն իր վրա է վերցնում Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնը:

Հայաստանից Անի կփոխադրվեն շարժական տնակներ (որպես հանրակացարան), շինանյութ (քար, ավազ, ցեմենտ, մետաղ, փայտ), մեխանիզմներ և սարքավորումներ (շարժական էլեկտրակայան, ավտոմեքենաներ, ավտոկռունկներ, բուլդոզերներ, էքսկավատորներ, քար կտրող դազգահներ և այլն):

4. Անի քաղաքի և կից տարածքներում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության գործը բարելավելու նպատակով առաջարկվում է Անի քաղաքը հայտարարել պատմամշակութային միջազգային արգելոց-թանգարան, կազմել արգելոցի օգտագործման ու ղեկավարման կանոններ և կարգավիճակը հաստատող միջպետական փաստաթղթեր:

Նախատեսվում է ստեղծել արգելոց-թանգարանի միացյալ դիրեկցիա և որոշել յուրաքանչյուր կողմի պարտականությունները և պարտավորությունները հուշարձանների պահպանության ընագավառում:

Երկու համադիրեկտորների (մեկը՝ Թուրքիայից, մյուսը՝ Հայաստանից) կողմից ղեկավարվող միացյալ դիրեկցիայում աշխատելու համար յուրաքանչյուր տարի Հայաստանից Անի կգործուղվեն համապատասխան մասնագետներ (հավանաբար ընտանիքներով), որոնք որոշակի ժամկետում կկատարեն իրենց պարտականությունները և պայմանագրային ժամկետը լրանալուն պես ետ կվերադառնան: Նույն սկզբունքով կաշխատեն նաև նրանց փոխարինողները:

Փաստորեն «Անի» միջազգային արգելոց-թանգարանը կկորդինացնի և կղեկավարի Անիի տարածքում կատարվող բոլոր կարգի աշխատանքները՝ հնագիտական պեղումները, հուշարձանների կոնսերվացումը և վերականգնումը, տուրիստական սպասարկումը (այցելուների ընդունումը, ուղեցույցների հրատարակումը):

Արգելոց-թանգարանի միացյալ դիրեկցիայում աշխատող Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների աշխատավարձը և նրանց պահպանման բոլոր ծախսերը կատարելու է Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնը:

5. Մեր կողմից ներկայացվող վերոհիշյալ բոլոր առաջարկությունների քննարկման համար առաջարկվում է ստեղծել Թուրքիայի և Հայաստանի մասնագետներից կազմված համատեղ մշտական գործող հանձնաժողով, որի կազմում կընդգրկվեն հուշարձանների պահանության պետական մարմինների և գիտահետազոտական հիմնարկների ներկայացուցիչները»:

Ցավոք՝ բարձրացրած հարցերը մոռացության մատնվեցին: Մեր կողմից հարցը կրկին բարձրացվեց 1996թ., և արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը և Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային կենտրոնը դեկտեմբերի 11-ին համատեղ որոշում կայացրեցին «Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի պահպանության և ուսումնասիրման բնագավառում միջազգային համագործակցություն ծավալելու մասին»:

Ելնելով համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պահպանության մասին գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերի առկայությունից, ինչպես նաև Թուրքիայի տարածքում ազգային փոքրամասնությունների կողմից ստեղծած պատմական և մշակութային արժեք ներկայացնող քրիստոնեական ժառանգության պահպանության մասին Թուրքիայի Հանրապետության 1961թ. հուլիսի 9-ի Սահմանադրության (50-րդ հոդվածի 5-րդ մաս) պահանջներից, Եվրոպայի խորհրդի կողմից 1985թ. հոկտեմբերի 3-ին Գրենադայում ստորագրված «Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիայի», Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի կողմից 1991թ. Գրակովում մշակութային ժառանգության հետագա պահպանությունը բարելավելու մասին ընդունած որոշման հիմնադրույթներից, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան հանրապետության կառավարության հատուկ քննարկմանը ներկայացրեց Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի հետագա պահպանության, ուսումնասիրման և, այդ կապակցությամբ, Թուրքիայի Հանրապետության հետ համագործակցություն ծավալելու հարցերը:

ՀՀ ԳԱԱ նախագահության, Շիրակի մարզպետարանի և Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի վերոհիշյալ համատեղ որոշման մեջ, մասնավորապես, ասվում էր.

«1. Խնդրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ տեղյակ պահել Թուրքիայի Հանրապետության կառավարությանն այն մասին, որ միջազգային հանրության կողմից՝ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությունն արժանի է ուշադրության, և երկու հարևան երկրները համատեղ ջանքեր պետք է ձեռնարկեն հնագույն քաղաքի ավերակների պահպանության և ուսումնասիրման ուղղությամբ: Այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության համագործակցության առաջին դրսևորումները պետք է դառնան.

ա) 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից մեծապես տուժած և հետագա փլուզման վտանգի մեջ գտնվող հայ ճարտարապետության նշանավոր կառույցներից մեկի՝ Անիի Մայր տաճարի (որի կառուցման 1000-ամյակը լրանում է 2001 թվականին), վերականգնումը հայ ճարտարապետների և շինարար վարպետների ուժերով, հայկական կողմի նյութական միջոցների հաշվին.

բ) Անի քաղաքի հնագիտական պեղումները կատարող թուրքական արշավախմբի կազմում հայ հնագետների, պատմաբանների, ճարտարապետների և արվեստագետների մասնակցությունը և գիտական-հետազո-

տական ուսումնասիրությունների արդյունքների համատեղ ամփոփումը.

գ) Անի քաղաքի և կից տարածքներում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության գործը բարելավելու և զբոսաշրջիկների սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Անի քաղաքը միջազգային պատմահնագիտական արգելոց-թանգարան հայտարարելը և արգելոցի միացյալ թուրք-հայկական դիրեկցիայի ստեղծելը, որը կկոորդինացնի և կղեկավարի Անիի տարածքում կատարվող բոլոր կարգի աշխատանքները՝ հնագիտական պեղումները, հուշարձանների կոնսերվացումը և վերականգնումը, արգելոցի տարածքի բարեկարգումը, տուրիստական սպասարկումը, թանգարանի կազմակերպումը:

Արգելոց թանգարանն իր մեջ կընդգրկի նաև Հայաստանի տարածքի սահմանամերձ գոտում գտնվող նշանավոր ճարտարապետական հուշարձանները:

2. Նկատի ունենալով հանրապետության ազգաբնակչության մեծ հետաքրքրությունը դեպի Անի քաղաքը և նրա հուշարձանները, խնդրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը թույլատրել Շիրակի մարզպետարանին և Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնին հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան Թուրքիայի Հանրապետության հետ պետական սահման կազմող գոտում, Ախուրյան գետի ձախ ափին, կազմակերպել դիտահրապարակ զբոսաշրջիկների սպասարկման համար, խիստ անհրաժեշտ ծառայություններով:

3. Հավանություն տալ Շիրակի մարզպետարանի և Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի նախաձեռնությանը՝ հանրապետության ազգաբնակչությանն Անի քաղաքում և Շիրակի մարզում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների հետ ծանոթացնելու նպատակով ձեռնարկություն ստեղծելու մասին:

4. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ պատմության, արևելագիտության և արվեստի ինստիտուտներին՝ Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի հետ համատեղ հրատարակության պատրաստել Անի քաղաքին և Շիրակի ճարտարապետությանը նվիրված բուկլետներ, ուղեցույցներ և ալբոմներ»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գիտությունների ազգային ակադեմիայի կողմից ներկայացված կառավարության որոշման նախագիծը հանձնարարել էր քննարկել շահագրգիռ կազմակերպություններում և առաջարկություններ ներկայացնել: Մի շարք նախարարություններ և ՀՀ կառավարության աշխատակազմի համապատասխան վարչություններ, քննարկելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացրած կառավարության որոշման նախագիծը, իրենց առաջարկությունները ու դիտողությունները էին ներկայացրել ՀՀ վարչապետին, որն առանց կառավարությունում քննարկելու, հանձնարարել էր ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությանը, շահագրգիռ նախարարությունների ու կազմակերպությունների հետ համատեղ համակողմանի քննության առնել ներկայացված առաջարկությունները և ընթացք տալ:

Սակայն ցավոք՝ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը 1997թ-ից առ այսօր չի կատարել ՀՀ կառավարության հանձնարարությունը:

Ի տարբերություն շահագրգիռ մյուս կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը 1997թ. մայիսի 7-ին կրկին անդրադարձավ իր 1996թ. դեկտեմբերի 11-ի որոշմանը և, ի կատարում ՀՀ կառավարության հանձնարարականի, կայացրեց մի նոր որոշում, որով համապատասխան հանձնարարականներ տրվեցին ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքին և առանձին ինստիտուտներին:

Ընդունվեց ի գիտություն, որ ՀՀ Ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարարությունը թույլատրել է և ՀՀ կառավարությունը տվել է իր համաձայնությունն Ախուրյան գետի ձախ ափին, սահմանամերձ գոտում հնագիտական հետազոտություններ կատարել և էքսկուրսիոն նպատակներով սպասարկել ազգաբնակչությանը:

Ընդունվեց նաև ի գիտություն, որ Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային կենտրոնին թույլատրվել է ստեղծել տուրիստական սպասարկման գիտաարտադրական ձեռնարկություն և սահմանամերձ գոտում՝ սահմանապահ ուղեկալի տարածքում, Ախուրյան գետի ձախ ափին կազմակերպել Անի քաղաքը դիտելու հրապարակ ու զբոսաշրջիկների սպասարկման համար առաջին անհրաժեշտության ծառայություններ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը միաժամանակ հանձնարարեց ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքին.

ա) Քննարկել և սահմանված կարգով առաջարկություն ներկայացնել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից Ախուրյան գետի ձախ ափին՝ սահմանամերձ գոտում հնագիտական հետազոտություններ կատարելու մասին:

բ) Անհրաժեշտ համարել Անի քաղաքի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմությանը նվիրված տարբեր լեզուներով գիտական գրականության հրատարակումը պետական պատվերի միջոցով և այդ կապակցությամբ սահմանված կարգով ներկայացնել հրատարակվող գրականության ցանկը և ծախսերի հաշվարկները:

Հարց բարձրացվեց ՀՀ Արտաքին գործերի նախարարության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովի առջև՝ ելնելով հուշարձանների և պատմական վայրերի պահպանության մասին գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերի առկայությունից, դիմել Թուրքիայի կառավարությանը 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից մեծապես տուժած և հետագա փլուզման վտանգի մեջ գտնվող Անիի Մայր տաճարի վերականգնման, Անի քաղաքը միջազգային պատմահնագիտական արգելոց-թանգարան հայտարարելու, Անիի հնագիտական պեղումներին հայ հնագետներին և արվեստագետներին մասնակից դարձնելու առաջարկությամբ:

Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության մտահոգությամբ վերջերս հանդես եկան Անիի Մայր տաճարի հազարամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցները: Նրանք 2002 թվականի սեպտեմբերի 24-ին հանդես եկան հատուկ հայտարարությամբ, որտեղ, մասնավորապես, ասվում էր.

«Ելնելով Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության ներկա վիճակից, միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի Մայր

տաճարի օծման 1000-ամյակին նվիրված Օշականի գիտաժողովի մասնակիցները դիմում են Հայաստանի հանրապետության և Թուրքիայի հանրապետության կառավարություններին և կոչ են անում համատեղ միջոցառումներ ձեռնարկել Թուրքիայի հանրապետության տարածքում գտնվող հայկական հուշարձանների հետագա պահպանությունն ապահովելու համար:

Գիտաժողովի մասնակիցները գտնում են, որ Թուրքիայի հանրապետության և Հայաստանի հանրապետության կառավարություններն իրրև ժողովրդավարության հետևորդներ պետք է ընդհանուր համաձայնության գան և ելնելով Թուրքիայի հանրապետության ներկա Սահմանադրության պահանջներից՝ պատմական և մշակութային արժեք ներկայացնող ստեղծագործությունների ու հուշարձանների պահպանության, ազգային փոքրամասնությունների և Թուրքիայի տարածքում գտնվող քրիստոնեական ժառանգության պահպանության մասին, ինչպես նաև 1985թ. հոկտեմբերի 3-ին Գրենադայում ստորագրված «Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիայի» և 1991թ. Կրակովում Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի մշակութային ժառանգության հետագա պահպանությունը բարելավելու մասին ընդունված որոշման սկզբունքներից, համատեղ ջանքերով իրականացնեն Թուրքիայի հանրապետության տարածքում գտնվող հայկական պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության և ուսումնասիրման գործը և համատեղ միջոցառումներ ձեռնարկեն այդ բնագավառում:

Անհրաժեշտ է, որ երկու հանրապետությունների կառավարությունները համաձայնագիր կնքեն ապահովելու համար Թուրքիայի հանրապետության տարածքում գտնվող հայկական պատմաճարտարապետական հուշարձանների հետագա պահպանության բնագավառում պետական և հասարակական հարաբերությունների կարգավորումը և այդ կապակցությամբ.

1. Որոշեն Թուրքիայի տարածքում պահպանված հայկական պատմաճարտարապետական հուշարձանների կարգավիճակը.

2. Սահմանեն այդ հուշարձանների պահպանության գործում Թուրքիայի հանրապետության և Հայաստանի հանրապետության համապատասխան պետական մարմինների պարտավորությունները և իրավունքները.

3. Ապահովեն հայկական պատմաճարտարապետական հուշարձանների պահպանությունն ապահովող տնտեսական միջոցառումները և միջոցները.

4. Սահմանեն պատմամշակութային արժեքների ուղղակի կամ անուղղակի վնաս հասցնող գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու կարգը.

5. Պատմամշակութային ժառանգության պահպանության մասին Թուրքիայի հանրապետությունում ներկայումս գործող օրենսդրական և իրավական փաստաթղթերի հիման վրա նախատեսեն երկու երկրների հուշարձանների պահպանությունն իրականացնող պետական մարմինների և գիտական հաստատությունների ներկայացուցիչներից կազմված միջպետական մասնագիտական մշտական գործող հանձնաժողովի ստեղծումը.

6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային հանրությունն առանձնակի հետաքրքրություն և ուշադրություն է ցուցաբերում միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների նկատմամբ, անհրաժեշտ համարել

առանձնահատուկ միջոցառումների կազմակերպումը քաղաքի ավերակների պահպանության ուղղությամբ, դրանով իսկ փրկելով անվերադարձ կորստյան վտանգից:

Գիտաժողովի մասնակիցները գտնում են, որ Անիի հուշարձանների պահպանման առաջնահերթ և անհետաձգելի միջոցառումները պետք է նպատակաուղղվեն.

ա) 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից խիստ տուժած հայ և համաշխարհային ճարտարապետության նշանավոր կառույցներից մեկի՝ 1001 թվականին կառուցված Անիի Մայր տաճարի վերականգնմանը՝ հայ ճարտարապետների ու շինարարների մասնակցությամբ՝ աշխատանքների հետ կապված բոլոր տեսակի ծախսերի կատարումը հայկական կողմի հաշվին:

բ) Անի քաղաքում կատարվող հնագիտական պեղումների և հուշարձանների վերականգնման աշխատանքներին Հայաստանի պատմաբաններից, ճարտարապետներից, հնագետներից և արվեստագետներից կազմված խմբին մասնակից դարձնելուն, որը մեծապես կնպաստի հայ և թուրք մասնագետների համագործակցության զարգացմանը:

գ) Անի քաղաքի և կից տարածքներում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության, վերականգնման և այցելուների սպասարկման գործը պատշաճ հիմքերի վրա դնելուն և Անի քաղաքը միջազգային հնագիտական արգելոց-թանգարան հայտարարելուն և այդ կապակցությամբ արգելոց-թանգարանի միացյալ՝ թուրք-հայկական տնօրինություն ստեղծելուն:

Գիտաժողովի մասնակիցները համոզմունք են հայտնում, որ Թուրքիայի Հանրապետության կառավարությունը քաղաքակրթության զարգացման արդի փուլում, երբ առաջին պլան են մղվում համամարդկային արժեքների պահպանման նկատմամբ մարդասիրական նպատակները, կանսա իր վաղեմի հարևանի սույն կոչին և Հայաստանի հանրապետության կառավորության առաջարկությունը կընդունի որպես մշակութային արժեքները գալիք սերունդներին փախանցելու անկեղծ դրսևորում և մի նոր քայլ՝ երկու ժողովուրդների մշակութային համագործակցության զարգացման ճանապարհին»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Paolo Cuneo. Les ruines de la ville d'Ani. Un probleme urgent de sauvagarde et de mise en valeur, "Monumentum", 5, 1970, pp. 50-51.

[2] Նույն տեղում, էջ 70-71:

[3] Paolo Cuneo. L'Architectura della scuda regionale di Ani nell' Armenia Medievale, Roma, 1977; Paolo Cuneo. Architectura Armenia, Roma, 1988, toma I, pp. 416-433:

[4] Paolo Cuneo. Les ruines de la ville d'Ani.., pp. 68-69.

[5] Լեո. Անի. Տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Երևան, 1963, էջ 15-16:

Резюме

Еще раз о вопросе организации историко-археологического международного заповедника Ани-Ереруйк.

Лаврентий Барсегян

Проблема спасения находившихся за рубежом историко-архитектурных армянских памятников, в частности, памятников исторической армянской столицы Ани - одна из важных и тревожных. Возросший современный интерес к памятникам Ани обусловлен их неоценимым общечеловеческим значением.

Каковы причины тревоги, что сделано с нашей стороны в связи с этим и, самое главное, что надо делать: вот круг вопросов, задач, которые затрагиваются в данной статье? В частности, для спасения от гибели армянских историко-архитектурных памятников, находившихся на территории Турецкой республики, еще раз акцентируется важность регулируемых государственных, общественных отношений в этой области, необходимость конкретных совместных шагов в решении этой проблемы.

Summary

Once Again about Organization of the International Historical Archeological Reserve in Ani-Yereruyk.

Lavrenti Barseghian

One of the most important and troublesome problems is to protect and save from destruction the Armenian historical-architectural monuments in Ani, one of the capitals of Historical Armenia. The growth of the modern interest towards the monuments in Ani is connected with their universal historical-cultural value.

Which are the sources of trouble? What have we done for that? What must we do? Here are the questions which are referred to in this article.

In particular, we come to and emphasize once again the importance of regulation of state and social relations in the sphere of protection of architectural monuments in the territory of Turkey, the necessity of doing concrete steps for solution of that problem.